ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ
ՀՐԱՄԱՆ

«27» դեկտեմբեր 2014թ. No 3130 – Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՍԵՌԱՎԱՐԱԿՆԵՐԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ 2015 - 2020 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԾՐԱԳԻՐԸ ԵՎ ԱԶԳԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1913-Ն որոշման 2-րդ հավելվածի 10-րդ կետի 2-րդ ենթակետը և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի օգոստոսի 15-ի N 1300-Ն որոշման Հավելված 1-ով հաստատված Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության կանոնադրության 12-րդ կետի «դ» ենթակետով և Հայաստանի Հանրապետությունում սեռավարակների համաճարակաբանական հսկողության համակարգի կատարելագործման նպատակով.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հաստատել՝ «Հայաստանի Հանրապետությունում սեռավարակների կանխարգելմանն ուղղված ազգային ծրագիրը»՝ համաձայն հավելված 1-ի:
2. Հաստատել՝ «Հայաստանի Հանրապետությունում սեռավարակների կանխարգելմանն ուղղված ազգային ծրագրի» միջոցառումների ցանկը՝ համաձայն հավելված 2-ի:
3. Սույն հրամանի կատարման հսկողությունը հանձնարարել Հանրապետության առողջապահության նախարարի տեղակալ Սերգեյ Խաչատրյանին:

Ա. ՄՈՒՐԱԴՅԱՆ

Հավելված 1

Հայաստանի Հանրապետության

առողջապահության նախարարի

2014 թվականի N – Ա հրամանի

ԱԶԳԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՍԵՌԱՎԱՐԱԿՆԵՐԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ 2015 - 2020 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ

I. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

1. Ամբողջ աշխարհում սեռական ճանապարհով փոխանցվող վարակները (այսուհետ՝ սեռավարակներ) բեռ են հանրային առողջապահության և տնտեսության համար՝ հատկապես զարգացող երկրներում, ուր դրանց մասնաբաժինը կազմում է առողջության հետ կապված տնտեսական վնասի 17%-ը:

2. Արդեն երկար տարիներ է սեռավարակները համարվում են հանրային առողջապահության գերակա խնդիրներից մեկը: Սեռական ճանապարհով փոխանցվում են շուրջ 20 մանրէային, վիրուսային և մակաբուծային հիվանդություն: Առավել տարածված են մանրէային՝ գոնորեան, քլամիդիային վարակը, սիֆիլիսը, դոնովանոզը, միկոպլազմոզը և ուրեոպլազմոզը և վիրուսային՝ մարդու իմունաանբավարարության վարակը (այսուհետ՝ ՄԻԱՎ վարակ), հասարակ հերպեսը, սրածայր կանդիլոման, հեպատիտ Բ-ն, մասամբ՝ նաև Ց-ն, ցիտոմեգալովիրուսային վարակը, հպավարանցիկ մոլյուսկը, նախնէակային՝ տրիխոմոնոզը, մակաբուծային՝ ցայլքի ոջլոտությունը և քոսը, սնկային՝ կանդիդոզը:

3. Ըստ Առողջապահության համաշխարհային կազմակերպության (այսուհետ՝ ԱՀԿ) տվյալների 2013 թվականի ընթացքում աշխարհում սեռավարակներով հիվանդացել է 1 միլիարդից ավել մարդ. այսպես՝ 500 միլիոն մարդ հիվանդացել է չորս հիմնական

հիվանդությամբ՝ քլամիդիոզ, գոնորեա, սիֆիլիս, տրիխոմոնազ, 530 միլիոն մարդ՝ սեռական հերպեսով, 290 միլիոն կին՝ մարդու պապիլոմայի վիրուսով: ՍՃՓՎները հատկապես շատ տարածված են Հարավային և Հարավ-արևելյան Ասիայի, Աֆրիկայի և Լատինական Ամերիկայի և Կարիբյան ավազանի երկրներում:

4. Չնայած սեռավարակներով հիմնականում հիվանդանում են սեռական հարաբերությունների հետևանքով, սակայն արձանագրվում է նաև ուղղաձիգ փոխանցման մեխանիզմով՝ մորից երեխային՝ հղիության կամ ծննդաբերության ժամանակ, ինչպես նաև արյան և դրա բաղադրիչների փոխներարկման, օրգանների փոխպատվաստման ժամանակ, եզակի դեպքերում՝ նաև այլ ոչ սեռական ճանապարհներով:

5. Սեռավարակները մորից երեխային փոխանցվելը կարող է բերել մեռելածնության, նորածնի մահվան, ցածր քաշով երեխայի ծնվելուն, պտղի անհասության, սեպսիսի, թոքաբորբի, նորածնային կոնյուկտիվիտի և բնածին արատների: Ամեն տարի չբուժված գոնոկոկային և քլամիդիային վարակով մայրերից ծնված երեխաներից շուրջ 4000-ը կուրանում է աչքի վարակների պատճառով: Ըստ ԱՀԿ տվյալների հղիության ժամանակ սիֆիլիսով հիվանդացման պատճառով տարեկան գրանցվում է պտղի և նորածնի մահվան 305000 դեպք, 215000 երեխա ծնվում է բարձր մահվան ռիսկով: Տարեկան 530000 կին մարդու պապիլոմայի վիրուսով վարակվածության պատճառով հիվանդանում է արգանդի վզիկի քաղցկեղով, նրանցից 275000-ը մահանում են: Գոնորեան և քլամիդիոզը փոքր կոնքի բորբոքային հիվանդությունների հիմնական պատճառներից են, ինչն էլ բերում է հղիության անբարենպաստ ելքերի և անպտղության:

6. Զուգընկերների կողմից գործադրվող բռնությունները լուրջ և լայն տարածում ունեցող հիմնախնդիրներից են, որոնք մարդու իրավունքների խախտում լինելուց բացի, հանդիսանում են սեռական ճանապարհով փոխանցվողվարակների, ինչպես նաև ՄԻԱՎ վարակի տարածմանը նպաստող գործոն: Համաձայն բռնության գլոբալ տարածվածության վերաբերյալ վերջին տվյալների, աշխարհում կանանց շուրջ 35

տոկոսը իր կյանքի ընթացքում բռնության է ենթարկվում զուգընկերոջ կողմից կամ սեռական բռնության՝ այլ անձի կողմից;

7. Առողջապահության համաշխարհային կազմակերպության կողմից մի շարք, հիմնականում զարգացող երկրներում, 15-ից 49 տարեկան կանանց շրջանում իրականացված հետազոտությունների արդյունքում պարզվել է, որ տարբեր երկրներում կանայք բռնությունների են ենթարկվում 15 տոկոսից մինչև 70 տոկոս դեպքերում:

8. Բռնություն գործադրող մարդկանց վրա ազդում են այնպիսի գործոններ, ինչպիսիք են կրթության ցածր մակարդակը, մանկական հասակում կրած դաժան վերաբերմունքը և ընտանիքում բռնության առկայությունը, ալկոհոլի վնասակար չափերով ոգտագործումը, բռության նկատմամբ հանդուրժողականությունը և գենդերային անհավասարությունը:

9. Համաձայն վերլուծական հետազոտությունների՝ 2013 թվականին ֆիզիկական կամ սեռական բռնության ենթարկված կանանց շրջանում սեռական ճանապարհով փոխանցվող վարակները, իսկ որոշ տարածաշրջաններում նաև ՄԻԱՎ-ով վարակվածությունը, 1,5 անգամ գերազանցում է բռնության չենթարկված կանանց մոտ նույն ցուցանիշները:

10. Կախված սեռերի իրավունքների տարբերությունից, շատ, երկրներում սոցիալ-մշակույթային գործոններով պայմանավորված, կանանց և աղջիկների առողջությունը հատկապես անհանգստացնող է, նրանք ավելի խոցելի են սեռական ճանապարհով փոխանցվող վարակների և ՄԻԱՎ-ով վարակվելու տեսակետից: Որոշ սոցիալ-մշակույթային գործոններ խոչնդոտում են կանանց և աղջիկներին որակյալ առողջապահական ծառայություններից օգտվելուն և բավարար առողջություն պահպանելուն:

11. Տարեկան միլիոնավոր մարդիկ սեռական ճանապարհով վարակվում են նաև ՄԻԱՎ վարակով, հերպեսով, հեպատիտ Բ-ով: Որոշ սեռավարակներներ կարող են ՄԻԱՎ-ով վարակվելու վտանգը բարձրացնել երեք և ավելի անգամ:

12. Ըստ ԱՀԿ-ի՝ սահմանափակ բջջաբանական հետազոտություններ իրականացնելու հնարավորություններ ունեցող երկրներում առաջարկվում է ներդնել մարդու պապիլոմայի վիրուսի դեմ պատվաստումներ՝ արգանդի վզիկի քաղցկեղը կանխարգելելու ու մահացությունը նվազեցնելու նպատակով:

13. Սեռական ճանապարհով փոխանցվող վարակ հանդիսացող հիվանդությունները հնարավոր է կանխարգելել և բուժել՝ համապարփակ և համակարգված մոտեցման դեպքում: Արդյունքում՝ կանխարգելելով սեռավարակները հնարավոր է նպաստել ՄԻԱՎ վարակի փոխանցման նվազմանը, հղիության անբարենպաստ ելքերի, կանանց շրջանում բարդ հետևանքների կանխարգելմանը:

14. Սեռավարակների վերահսկման և կանխարգելման, բուժման, նրանց տարածվածության նվազեցմանն ուղղված ծրագրերի և միջոցառումների իրականացման ճանապարհին առկա են խոչնդոտներ, որոնք կապված են մարդկանց պատմականորեն ձևավորված, առվելապես սոցիալ-հոգեբանական գործոններով պայմանավորված կարծրատիպային մտածողության հետ: Այդպիսի գործոններից են՝

1) տգիտությունը և սեռավարակների մասին տեղեկատվության անբավարարությունը, որոնք նպաստում են այդ հիվանդությունների մասին սխալ պատկերացումների և ժխտողական վերաբերմունքի պահպանմանը,

2) սեռական ճանապարհով փոխանցվող շատ վարակներ հաճախ ընթանում են առանց ախտանշանների, մնում են չհայտնաբերված մինչև ուշ դրսևորումները և բարդությունների զարգացումը, հատկապես կանանց մոտ,

3) սեռավարակների (վեներական հիվանդությունների) նկատմամբ ժխտողական վերաբերմունքը հզոր խոչնդոտ է այդ հիվանդությունների կանխարգելմանը և բուժմանը ուղղված միջոցառումների իրականացման ճանապարհին,

4) անհատական և համայնքային մակարդակներում ժխտողականությունը բերում է հիվանդության վաղ շրջանում բուժօգնության դիմելու ցանկության բացակայության,

5) բուժման համար հիվանդները գերադասում են դիմել մասնավոր բժշկական օգնության՝ որակավորված բժիշկներին, դեղագործներին, հեքիմներին կամ այլ

ծառայություններ մատուցողներին, որոնց օգնությունը ընկալվում է որպես ավելի մատչելի, ավելի գաղտնի և պակաս պիտակավորող, քան մասնագիտացված բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպություններում,

6) սեռական ճանապարհով փոխանցվող վարակներով հիվանդների, նրանց սեռական զուգընկերների բուժման և տեղեկացման դժվարությունները,

7) քաղաքականության ձևավորման և որոշումներ ընդունելու մակարդակներում գործում են հետևյալ գործոնները,

8) որոշ քաղաքականություն մշակող անձինք սեռավարակների դեմ պայքարը համարում են ոչ առաջնահերթ խնդիր: Այդ իրավիճակը վատթարանում է ժխտողականության և նախապաշարմունքների, ինչպես նաև առողջության և տնտեսական զարգացման համար սեռական ճանապարհով փոխանցվող վարակների հետևանքների լրջության թերագնահատումը,

9) դոնոր կազմակերպությունները առողջապահության ոլորտին օգնություն տրամադրելիս հաճախ հակված են ընհանուր ոլորտային մոտեցման, այլ ոչ կոնկրետ այնպիսի ծրագրերի, ինչպիսիք են սեռավարակների դեմ պայքարին ուղղված ծրագրերը,

10) սեռավարակների առումով բնակչության առավել խոցելի խմբերի (օրինակ՝ երիտասարդության և անչափահասների, հոմոսեքսուալների, տոքսիկոմանների, ազատզրկվածների, հաճախ ճամփորդողների (ծառայողական կամ հանգստի նպատակով), անտուն երիտասարդների և երեխաների և այլն) համար չեն ապահովվում պատշաճ ուսուցում և ծառայություններ:

II. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՍԵՌԱՎԱՐԱԿՆԵՐԻ ՏԱՐԱԾՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ

15. Հայաստանի Հանրապետությունում վերջին հինգ տարվա ընթացքում դիտվել է սեռավարակներով հիվանդացածության աճ: Այսպես՝ սեռավարակներով հիվանդացածության ընհանուր թիվը 2009 թվականին եղել է 42514, իսկ 2013 թվականինին՝ 48116: Սեռավարակների կառուցվածքում հատկապես մեծ թիվ են կազմում կանդիդոզը (26575), գարդներելիոզը (11520), տրիխոմոնազը (3746), քլամիդիոզը (1690) և միկո/ուրեպլազմոզը (1555): 2009-2013 թվականներին հիվանդացածության աճը հիմնականում պայմանավորված է կանդիդոզի (մոտ 5000) և գարդենեներելիոզի (մոտ 2500) դեպքերի աճով: Որոշ հիվանդությունների արձանագրումը նվազել է. մասնավորապես՝ սիֆիլիսի դեպքերը 2009 թվականին եղել են 140, իսկ 2013 թվականինին՝ 55, տրիխոմոնազի դեպքերը 2009 թվականին եղել են 4800, իսկ 2013 թվականինին՝ 3746, գոնորեայի դեպքերը , 2009 թվականին եղել են 586, իսկ 2013 թվականինին՝ 409 :

16. Սեռավարակների առումով առավել խոցելի են Երևան քաղաքը, Շիրակ, Լոռի, Սյունիք և Արագածոտն մարզերը: Այսպես՝ 2013 թվականին սիֆիլիսը ավելի շատ արձանագրվել է Երևանում (18 դեպք) և Շիրակում (13 դեպք), գոնորեայով հիվանդացածությունը ավելի բարձր է եղել Երևանում (186 դեպք), Շիրակում (53 դեպք), Լոռիում (50 դեպք), Սյունիքում (25 դեպք), Արագածոտնում (23 դեպք): ՀՀ մարզերում սեռավարակներից ամենից շատ տարածված է միզասեռական կանդիդոզը: Մյուս սեռավարակների տարածվածությունը ցածր մակարդակի վրա է:

17. Անախտանշան ձևերի բարձր տարածվածություն ունեն միզասեռական կանդիդոզը, գարդներելյոզը, տրիխոմոնազը, ուռեոպլազմոզը և սիֆիլիսը:

18. Ներկայում Հայաստանի Հանրապետությունում իրականացվում է ռիսկի քանակակազմի պատվաստում հեպատիտ Բ-ի նկատմամբ, որը կանոնակարգվում է Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 2008 թվականի հոկտեմբերի 15-ի «ՀՀ իմունականխարգելման գործընթացի կազմակերպում և իրականացում» թիվ 3.1.6.009-08 սանիտարահամաճարակային կանոնները և նորմերը հաստատելու մասին N 20 –Ն հրամանով:

19. Արգանդի վզիկի քաղցկեղի կանխարգելման համար պապիլոմա վիրուսի դեմ պատվաստումները ընդգրկված չեն պատվաստումների ազգային օրացույցի մեջ:

III. ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

20. Սեռավարակների կանխարգելմանն ուղղված ազգային ծրագրի նպատակը Հայաստանի Հանրապետությունում սեռական ճանապարհով փոխանցվող վարակների կանխարգելումը, ինչպես նաև հիվանդացության և սեռավարակների բարդություններից մահացության նվազեցումն է:

21. Ծրագրի խնդիրներն են՝

1) Սեռավարկների կանխարգելմանն ուղղված ազգային քաղաքականության զարգացում

2) Սեռավարակների համաճարակաբանական հսկողության համակարգի վերանայում՝ միջազգային մոտեցումներին համապատասխան,

3) Սեռավարակների լաբորատոր ախտորոշման համակարգի զարգացում,

4) Սեռավարակների վաղ հայտնաբերման գործընթացի զարգացում,

5) Սեռավարակների կանխարգելման շարունակական և կայուն համակարգի ձևավորում,

6) Սեռավարակների առումով բնակչության բժշկահիգիենիկ կրթության, առողջ ապրելակերպի քարոզչության գործընթացի զարգացում,

7) Սեռավարակների առումով գենդերային հավասարությանն ուղղված քարոզչության գործընթացի զարգացում,

8) Գործողությունների նպատակային ծրագրի իրականացման գործընթացի մշտադիտարկում(մոնիթորինգ):

Հավելված 2

Հայաստանի Հանրապետության

առողջապահության նախարարի

2014 թվականի դեկտեմբեր 27-ի N 3130 – Ա հրամանի

ՑԱՆԿ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՍԵՌԱՎԱՐԱԿՆԵՐԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ 2015-2020 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՄԻՋՈՑՌՈՒՄՆԵՐԻ

Միջոցառումների անվանումը	Կատարման ժամկետը	Ակնկալվող արդյունքներ	Կատարողը	Ֆինանսավորման աղբյուրը
Ի. ՍԵՌԱՎԱՐԱԿՆԵՐԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԱԶԳԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ				
1. Համագործակցության զարգացում և իրականացվող ծրագրերի ինտեգրում, որի միջոցառումներն են.				
1) Ստեղծել սեռավարկների համակարգման մասնագիտական խորհուրդ՝ ներգրավելով մարդու իմունաանբավարարության վարակ/ձեռքբերովի իմունաանբավարարության համախտանիշի (այսուհետ՝ ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի), իմունականխարգելման, հեպատիտների ծրագրերում ներգրավված մասնագետների:	2015 թվական	Մասնագիտական խորհուրդը իրականացնում է սեռական ճանապարհով փոխանցվող վարակիչ հիվանդությունների կանխարգելմանն ուղղված աշխատանքների համակարգված կառավարումը	Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն,	Ֆինանսավորում չի պահանջվում
2) Համագործակցել միջազգային և	2015-2020	Համագործակցելով	Հայաստանի	Պետական բյուջեով

հասարակական կազմակերպությունների ու հիմնադրամների հետ՝ սեռավարակների կանխարգելման հարցերի շուրջ:	թվականներ	միջազգային և հասարակական կազմակերպությունների ու հիմնադրամների հետ, ապահովվում է այդ կազմակերպությունների մասնակցությունը սեռական ճանապարհով փոխանցվող վարակիչ հիվանդությունների կանխարգելմանն ուղղված ծրագրերի իրականացմանը և ինտեգրմանը միջազգային գործընթացներին	Հանրապետության առողջապահության նախարարություն,	առողջապահության ոլորտին հատկացվող գումարների շրջանակում, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելվող աղբյուրներից
2. Սեռավարակների կանխարգելման ոլորտին վերաբերվող օրենսդրության կատարելագործում, որի միջոցառումներն են.				
1) Մշակել և ներդնել «Սեռավարակների համաճարակաբանական հսկողություն» սանիտարահամաճարակաբանական կանոնները և նորմերը:	2015 թվական	ՀՀ առողջապահության նախարարությունը մշակում և ներդնում է «Սեռավարակների համաճարակաբանական հսկողություն» սանիտարահամաճարակաբանական կանոնները և նորմերը:	Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն,	Ֆինանսավորում չի պահանջվում
II. ՍԵՌԱՎԱՐԿՆԵՐԻ ՀԱՄԱՃԱՐԱԿԱԲԱՆԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ				
3. Սեռավարակների համաճարակաբանական հսկողության համակարգի գործադրում, որի միջոցառումներն են.				
1) Մշակել նպատակային քանակակազմերի շրջանում սեռավարկների նկատմամբ լաբորատոր հետազոտությունների	2015 թվական.	Նպատակային քանակակազմերի շրջանում սեռավարկների	Հայաստանի Հանրապետության առողջապահության	Ֆինանսավորում չի պահանջվում

գործողությունների ծրագիր:		նկատմամբ լաբորատոր հետազոտությունների գործողությունների ծրագիրը մշակված է, որը գործում է համաճարակաբանական հսկողության համակարգում	նախարարություն	
2) Մշակել և ներդնել սեռավարակների և ուղեկցող վարակների համաճարակաբանական հսկողության համակարգ	2015-2016 թվականներ	Մշակվել և սեռավարակների համաճարակաբանական հսկողության համակարգում ներդրվել է սեռավարակների և զուգորդվող վարակների համաճարակաբանական հսկողության համակարգ	Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն	Ֆինանսավորում չի պահանջվում
3) Սեռավարակների հսկողության միջոցառումները զուգահեռ իրականացնել ՄԻԱՎ վարակի վերաբերյալ համաճարակաբանական հսկողության համակարգում	2015-2020 թվականներ	Սեռավարակների հսկողության միջոցառումները ընդգրկված են ՄԻԱՎ վարակի վերաբերյալ համաճարակաբանական հսկողության համակարգում	Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն	Պետական բյուջեով առողջապահության ոլորտին հատկացվող գումարների շրջանակում, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելվող աղբյուրներից
4)Սեռավարակների կանխարգելման ծրագրերը իրականացնել զուգահեռ	2015-2020 թվականներ	ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի կանխարգելման	Հայաստանի Հանրապետության	Պետական բյուջեով առողջապահության

ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի կանխարգելման ծրագրերում		ծրագրերում պարբերաբար ներառվում են սեռավարակների կանխարգելման հարցերը	առողջապահության նախարարություն	ոլորտին հատկացվող գումարների շրջանակում, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելվող աղբյուրներից
5) Լրամշակել վարչական վիճակագրական ձևերը՝ սեռավարկների մասով:	2015 թվական	Սեռավարկների մասով վարչական վիճակագրական ձևերը լրամշակված են և ընդգրկված ընդհանուր վիճակագրական համակարգի մեջ	Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն	Ֆինանսավորում չի պահանջվում
6) Բոլոր մակարդակներում, այդ թվում՝ տարածաշրջանային և մարզային իրականացնել սեռավարկների համաճարակային իրավիճակի ամսական վերլուծություն:	2015-2020 թվականներ	Բոլոր մակարդակներում, այդ թվում՝ տարածաշրջանային և մարզային, սեռավարկների համաճարակային իրավիճակի ամսական վերլուծության համակարգը ներդրված է, գնահատված են իրականացված աշխատանքները, վեր են հանված բացթողումները և ներկայացված են դրանց շտկման առաջարկությունները	Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն	Ֆինանսավորում չի պահանջվում

7)Բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպություններում իրականացնել տարբեր պրոֆիլի բժիշկների մոտ ախտորոշված սեռավարակների վերաբերյալ ստացված տվյալների ամփոփում, վերլուծություն, գնահատում:	2015-2020 թվականներ	Պարբերաբար կատարվում է բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպություններում տարբեր պրոֆիլի բժիշկների մոտ ախտորոշված սեռավարակների վերաբերյալ ստացված տվյալների ամփոփում, վերլուծություն և գնահատում:	Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն	Ֆինանսավորում չի պահանջվում
8) Մշակել և ներդնել սեռավարակների տվյալների (հիվանդացության, վարակակրության լաբորատոր հետազոտությունների դրական արդյունքում հայտնաբերված) վերլուծության համար համապատասխան մեթոդներ:	2015 թվական	Մշակվել և ներդրվել են սեռավարակների տվյալների (հիվանդացության, վարակակրության (լաբորատոր հետազոտությունների դրական արդյունքում հայտնաբերված) վերլուծության համար համապատասխան մեթոդներ,	Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն	Ֆինանսավորում չի պահանջվում

4.Սեռավարակների բուժման համար հակաբիոտիկների վարման մեթոդների կատարելագործում, որի միջոցառումներն են.				
1)Մշակել և ներդնել հակաբիոտիկների վարման մեթոդաբանություն, ներդնել սեռավարակների հարուցիչների դեղորայքակայուն ձևերի մոնիթորինգի համակարգը:	2015 թվական	Մշտապես իրականացվում է հակաբիոտիկների հաշվառում, սահմանված է հսկողություն դրանց օգտագործման վրա, ներդրված է սեռավարակների հարուցիչների դեղորայքակայուն ձևերի մոնիթորինգի համակարգը:	Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն	Ֆինանսավորում չի պահանջվում
2)Ստեղծել և վարել բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպություններում անջատվող սեռավարակների հարուցիչների՝ հակաբիոտիկների նկատմամբ զգայունության տվյալների էլկտրոնային բազա	2015-2016 թվականներ	բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպություններում անջատվող սեռավարակների հարուցիչների՝ հակաբիոտիկների նկատմամբ զգայունության տվյալների էլկտրոնային բազայի միջոցով կատարելագործվում է սեռավարակների հարուցիչների դեղորայքակայուն ձևերի հաշվառման	Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն	Պետական բյուջեով առողջապահության ոլորտին հատկացվող գումարների շրջանակում, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելվող աղբյուրներից

		համակարգը, նպաստում է տեղեկատվության փոխանակմանը, նվազեցնում է հակաբիոտիկների անտեղի օգտագործման ռիսկը:		
III. ՍԵՌԱՎԱՐԱԿՆԵՐԻ ԼԱԲՈՐԱՏՈՐ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՈՒՄ				
5. Սեռավարկների ախտորոշման լաբորատոր կարողությունների զարգացում, որի միջոցառումներն են.				
1) ՀՀ ԱՆ «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության (այսուհետ՝ ՀՎԿԱԿ ՊՈԱԿ) ռեֆերենս լաբորատոր կենտրոնում ստեղծել սեռավարկների ռեֆերենս լաբորատորիա:	2015-2016 թվականներ	Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության ՀՎԿԱԿ ՊՈԱԿ-ի ռեֆերենս լաբորատորիայի բազայի վրա ստեղծված է սեռավարկների ռեֆերենս լաբորատորիա, ուր ներդրված են սեռավարակների լաբորատոր հետազոտությունների մեթոդաբանություններ	Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն	Պետական բյուջեով առողջապահության ոլորտին հատկացվող գումարների շրջանակում, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելվող աղբյուրներից
2) Ապահովել ռեֆերենս լաբորատորիայի վերազինումն անհրաժեշտ սարքավորումներով և լաբորատոր նյութերի առկայության կայունությունը:	2015-2016 թվականներ	Ռեֆերենս Լաբորատորիան վերազինված և հագեցված է գործունեություն ծավալելու համար	Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն	Պետական բյուջեով առողջապահության ոլորտին հատկացվող գումարների շրջանակում,

				ինչպես նաև Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելվող աղբյուրներից
3) Ապահովել սեռավարկների լաբորատոր ախտորոշման ուղղությամբ մասնագետների պատրաստվածության շարունակականության գործընթացը:	2015-2020 թվականներ	Սեռավարակների լաբորատոր ախտորոշման ուղղությամբ մասնագետների պատրաստվածության շարունակականությունն ապահովված է	Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն	Պետական բյուջեով առողջապահության ոլորտին հատկացվող գումարների շրջանակում, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելվող աղբյուրներից
4) Մշակել և ներդնել սեռավարկների լաբորատոր ախտորոշման գործողությունների ստանդարտ ընթացակարգ:	2015 թվական	Սեռավարակների լաբորատոր ախտորոշումն իրականացված է ստանդարտացված մոտեցումների հիման վրա	Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն	Ֆինանսավորում չի պահանջվում
5) Ներդնել Բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպություններում սիֆիլիսի քլամիդիոզների և այլ սեռավարակների արագ ախտորոշման թեսթեր:	2015-2016 թվականներ	Բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպություններում ներդրված են սիֆիլիսի և քլամիդիոզների արագ ախտորոշման թեսթեր:	Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն	Պետական բյուջեով առողջապահության ոլորտին հատկացվող գումարների շրջանակում, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության

				օրենսդրությամբ չարգելվող աղբյուրներից
6) Ներդնել պոլիմերազային շղթայական ռեակցիա (այսուհետ՝ ՊՇՌ) թեսթեր սեռավարակների նկատմամբ պարզ նմուշների՝ մեզի, հեշտոցային քսուկի, հետազոտությունների համար:	2015-2016 թվականներ	ՊՇՌ թեսթեր սեռավարակների նկատմամբ պարզ նմուշների՝ մեզի, հեշտոցային քսուկի, հետազոտությունների համար ներդրված են:	Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն	Պետական բյուջեով առողջապահության ոլորտին հատկացվող գումարների շրջանակում, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելվող աղբյուրներից
6.Սեռավարկների նկատմամբ լաբորատոր հսկողության մեթոդների կատարելագործում՝ ապահովելով սեռավարկների լաբորատոր հաստատումը՝ արագ ախտորոշիչ թեստ համակարգերի, իմունոֆերմանտային անալիզ (այսուհետ՝ ԻՖԱ) և ՊՇՌ եղանակներով, որի միջոցառումներն են.				
1) Ապահովել ռիսկի խմբերի շրջանում լաբորատոր դրական պատասխանի յուրաքանչյուր դեպքի պարտադիր լաբորատոր հաստատումը ՊՇՌ եղանակով և վերջիններիս մասին հաղորդումը սահմանված կարգով:	2015-2016 թվականներ	Ռիսկի խմբերի շրջանում լաբորատոր դրական պատասխանի յուրաքանչյուր դեպք պարտադիր լաբորատոր հաստատվում է ԻՖԱ եղանակով և վերջիններիս մասին հաղորդվում է սահմանված կարգով:	Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն	Պետական բյուջեով առողջապահության ոլորտին հատկացվող գումարների շրջանակում, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելվող աղբյուրներից
7.Ապահովել նորածինների և վաղ մանկական հասակի երեխաների պաշտպանությունը սեռավարկներից, որի միջոցառումներն են.				
1) Մշակել հղիներին սեռավարկների նկատմամբ միանվագ լաբորատոր	2015 թվական	Ներդրված է հղիներին սեռավարկների	Հայաստանի Հանրապետության	Պետական բյուջեով առողջապահության

հետազոտությունների գործողությունների ընթացակարգ և դրան համաձայն իրականացնել հղիների շրջանում սեռավարկների վարակակրության մոնիթորինգ:		նկատմամբ միանվագ լաբորատոր հետազոտությունների գործողությունների ընթացակարգ և դրան համաձայն իրականացվում է հղիների շրջանում սեռավարկների վարակակրության մոնիթորինգ:	առողջապահության նախարարություն	ոլորտին հատկացվող գումարների շրջանակում, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելվող աղբյուրներից
2) Խրախուսել ընտանիքի պլանավորման կենտրոններում ամուսնացող զույգերին սեռավարակների նկատմամբ հետազոտություն անցնելը, ինչպես նաև տղամարդկանց առողջության ծրագրերը	2015-2020 թվականներ	Ընտանիքի պլանավորման կենտրոններում ամուսնացող զույգերին լուսաբանվում է սեռավարակների նկատմամբ հետազոտություն անցնելու կարևորությունը և խրախուսվում են տղամարդկանց առողջության ծրագրերը	Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն	Ֆինանսավորում չի պահանջվում
IV. ՍԵՌԱՎԱՐԱԿՆԵՐԻ ՎԱՂ ՀԱՅՏՆԱԲԵՐՄԱՆ ԵՎ ԲՈՒԺՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ				
8. Սեռավարկների նկատմամբ լաբորատոր հետազոտությունների իրականացում ռիսկի խմբերի շրջանում, որի միջոցառումներն են.				
1) Որոշել ռիսկի խմբերը և աշխատանքներ տանել դրանց շրջանում իրականացնելու լաբորատոր հետազոտություններ, շարունակական մոնիթորինգ,	2015-2020 թվականներ	Լաբորատոր հետազոտությունների նպատակային իրականացման համար	Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն	Պետական բյուջեով առողջապահության ոլորտին հատկացվող

վերահսկողություն, վերլուծություններ՝ ապահովելով հետադարձ կապը:		որոշված է ռիսկի քանակազմը, իրականացվում է շարունակական մոնիթորինգ, վերահսկողություն, վերլուծություններ՝ ապահովելով հետադարձ կապը:		գումարների շրջանակում, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելվող աղբյուրներից
9. Սեռավարակների բուժման մոտեցումների կատարելագործում, որի միջոցառումներն են.				
1) Սեռավարակների բուժման պրոտոկոլների և ուղեցույցների մշակում, ներդրում, դրանց վերաբերյալ բուժաշխատողների իրազեկում	2015 թվական	Սեռավարակների բուժման պրոտոկոլները, ուղեցույցները, ներդրված են, բուժաշխատողները դասընթացների միջոցով իրազեկվում են դրանց վերաբերյալ:	Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն	Ֆինանսավորում չի պահանջվում
2) Բուժաշխատողների շրջանում պարբերաբար սեմինարների կազմակերպում սեռավաարկների բուժման նոր մեթոդների վերաբերյալ:	2015-2020 թվականներ	Մշակված է ժամանակացույց և դրան համապատասխան պարբերաբար կազմակերպված են աշխատանքային խորհրդակցություններ և դասընթացներ բուժաշխատողների մասնակցությամբ՝ սեռավաարկների բուժման նոր մեթոդների վերաբերյալ:	Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն	Պետական բյուջեով առողջապահության ոլորտին հատկացվող գումարների շրջանակում, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելվող աղբյուրներից

3) Սեռավարակների կանխարգելման հարցերի ընդգրկում վերարտադրողական բժշկության և ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի ծրագրերում:	2015-2020 թվականներ	Վերարտադրողական բժշկության և ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի ծրագրերում ընդգրկված են սեռավարակների կանխարգելման հարցերը:	Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն	Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն
4)Ներդնել սեռավարկներով հիվանդների համալիր և համախտանշանային հիմքի վրա բուժման մոտեցումներ	2015-2020 թվականներ	Սեռավարկներով հիվանդների համալիր և համախտանշանային հիմքի վրա բուժման մոտեցումները ներդրված են:	Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն	Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն
5) Արգանդի վզիկի քաղցկեղի կանխարգելման նպատակով աշխատանքներ տանել պապիլոմա վիրուսի դեմ պատվաստումները պատվաստումների ազգային օրացույցի մեջ ընդգրկելու ուղղությամբ:	2015-թվական	Մշակված և հաստատման է ներկայացված Արգանդի վզիկի քաղցկեղի կանխարգելման նպատակով պապիլոմա վիրուսի դեմ պատվաստումները պատվաստումների ազգային օրացույցի մեջ ընդգրկելու մասին որոշման նախագիծը:	Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն	Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն

Ֆ. ՍԵՌԱՎԱՐԱԿՆԵՐԻ ԱՌՈՒՄՈՎ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԲԺՇԿԱՀԻԳԻԵՆԻԿ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԱՌՈՂՋ ԱՊՐԵԼԱԿԵՐՊԻ ՔԱՐՈԶՉՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ				
10. Բնակչության շրջանում իրազեկման աշխատանքների բարելավում և շարունակական ապահովում, որի միջոցառումներն են.				
1) Մշակել սեռավարակների կանխարգելման հարցի շուրջ քարոզչական նյութեր՝ հուշաթերթեր, պաստառներ և այլն	2015-2016 թվականներ,	Բնակչությանը սեռավարակների կանխարգելման մասին իրազեկվածությունը ապահովելու համար մշակված են վիրուսային հեպատիտների կանխարգելման հարցի շուրջ քարոզչական նյութեր՝ հուշաթերթեր, պաստառներ և այլն	Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն	Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն
2) Մշակել ռիսկի խմբերի և ամբողջ բնակչության շրջանում բժշկահիգիենիկ կրթություն և առողջ ապրելակերպի քարոզչության ժամանակացույց և դրան համապատասխան իրականացնել բժշկահիգիենիկ կրթություն և առողջ ապրելակերպի քարոզչություն:	2015-2020 թվականներ	Ռիսկի խմբերի և ամբողջ բնակչության շրջանում սեռավարակների վերաբերյալ բժշկահիգիենիկ կրթություն և առողջ ապրելակերպի քարոզչության ժամանակացույցին համապատասխան գործընթացն իրականացված է	Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն	Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն
3) Զանգվածային լրատվամիջոցներով բնակչությանը պարբերաբար իրազեկել սեռավարակների հիվանդացության նվազեցման, վերահսկման և կանխարգելման	2015-2020 թվականներ	Զանգվածային լրատվամիջոցներով պարբերաբար տրվում են հաղորդումներ	Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն	Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն

գործընթացին և դրանց կանխարգելիչ միջոցառումներին:		սեռավարակների տարածվածության և դրանց կանխարգելման, հիվանդացածության նվազեցման վերահսկման գործընթացների վերաբերյալ, իրազեկվում է կանխարգելիչ միջոցառումների մասին:		
4) Մշակել և իրականացնել սեռավարակների բնագավառում բժշկահիգիենիկ գիտելիքների տարածման և առողջ ապրելակերպի քարոզչության ծրագիր՝ համագործակցելով հասարակական և միջազգային կազմակերպությունների հետ:	2015-2020 թվականներ	Մշակված են սեռավարակների բնագավառում բժշկահիգիենիկ գիտելիքների տարածման և առողջ ապրելակերպի քարոզչության ծրագրեր , որոնք իրականացվում է միջազգային և հասարակական կազմակերպությունների համագործակցությամբ	Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն	Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն
5)Ապահովել շահագրգիռ կառույցների հետ ընտանիքի պահպանման, անվտանգ սեռական հարաբերությունների խրախուսման հարցերի շուրջ համագործակցություն:	2015-2020 թվականներ	Շահագրգիռ կառույցների հետ համատեղ իրագործվում են ընտանիքի պահպանման, անվտանգ սեռական հարաբերությունների խրախուսմանն ուղղված միջոցառումներ:	Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն	Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն
6)Մշակել պահպանակների օգտագործման խրախուսման քարոզչական ծրագիր:	2015 թվական	Մշակված է պահպանակների	Հայաստանի Հանրապետության	Հայաստանի Հանրապետության

		օգտագործման խրախուսման քարոզչական ծրագիր:	առողջապահության նախարարություն	առողջապահության նախարարություն
7) Բնակչության շրջանում լայնորեն լուսաբանել հակաբիոտիկներով ինքնաբուժման հնարավոր բացասական հետևանքների հարցերը	2015-2016 թվականներ	Քարոզչության տարբեր միջոցներով Բնակչության շրջանում լայնորեն լուսաբանվում է հակաբիոտիկներով ինքնաբուժման հնարավոր բացասական հետևանքների հարցերը	Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն	Պետական բյուջեով առողջապահության ոլորտին հատկացվող գումարների շրջանակում, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելվող աղբյուրներից
Սեռական ճանապարհով փոխանցվող վարակի(ներառյալ ՄԻԱՎ-ը) կանխարգելման կամ ռիսկի նվազեցման միջոցների վերաբերյալ խորհրդատվություն և լուսաբանում	2015-2020 թվականներ	Իրականացվում են Սեռական ճանապարհով փոխանցվող վարակի (ներառյալ ՄԻԱՎ-ը) կանխարգելման կամ ռիսկի նվազեցման միջոցների վերաբերյալ խորհրդատվություն և լուսաբանում	Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն	Ֆինանսավորում չի պահանջվում
VI. ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԴԻՏԱՐԿՈՒՄ (ՄՈՆԻԹՈՐԻՆԳ				
11. Իրավիճակի դիտարկում, գնահատում, առաջարկների ձևավորում , որի միջոցառումներն են.				
1) Դիտարկման, գնահատման և հիվանդացության, սեռավարակների տարածվածության ու հիվանդությունից բխող բարդությունների մասին տարեկան զեկույցի	2015-2020 թվականներ	Սեռավարակների տարածվածության ու հիվանդությունից բխող բարդությունների,	Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն	Ֆինանսավորում չի պահանջվում

պատրաստում, հրապարակում:		իրավիճակի բնորոշման, դիտարկման, գնահատման արդյունքում առաջարկությունների մասին տարեկան զեկույցը հրապարակված է		
2) Սեռավարակների կանխարգելման ազգային ռազմավարությունների, օրենսդրության վերլուծության, հիվանդացության, սեռավարակների տարածվածության և դրանից բխող հետևանքների գնահատման մասին զեկուցումների կանոնավոր հրապարակում:	2015-2020 թվականներ	Ազգային ծրագրի գործադրման ընթացիկ իրավիճակի բնորոշման, փոփոխությունների գնահատման և աշխատանքի ճշգրտման նպատակով իրավիճակի և դրան դիտարկման, գնահատման արդյունքում առաջարկությունների մասին զեկուցումները պարբերաբար հրապարակվում են:	Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն	Ֆինանսավորում չի պահանջվում